

11 Եւ զայս առներ զամենայն ժամանակս իւր<sup>1</sup> վասն անձին եւ վասն աշխարհի. քանզի սովոր իսկ եւ ճշմարիտ վարդապետք<sup>2</sup>՝ զանձանց առաքիտութիւնս կանոն աշակերտելոցն դնել, մանաւանդ յուշ առնելով զտերունականն<sup>3</sup>՝ զմիոյ միայնոյ<sup>4</sup> իմաստնոյն Աստուծոյ<sup>5</sup>. *Քանզի սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել*<sup>ա</sup>: 12 Որոյ բազում<sup>6</sup> անգամ առեալ զաշակերտսն ուրոյն, եւ աննիագական<sup>7</sup> անձամբն աւրինակ կարաւտելոցն լինէր, յորժամ ի Թաբարական լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր, եւ յորժամ ի Նմին լերին<sup>8</sup> զկանոնական զաղաթս առներ, մինչդեռ աշակերտքն<sup>9</sup> ի Տիբերական ծովուն Նաւին: 13 Եւ դարձեալ յաւուրս բաղարջակերացն յաւրինական տաւնին՝ զգիշերոյն աղաւթն եւ ցայգոյ<sup>10</sup>, ի Ձիթաստանեաց լերինն առանձինն մատուցանէր: 14 Ուստի եւ յայտնի իսկ է եւ առանց խուզելոյ<sup>11</sup>, եթէ ոչ վասն անձին ամենատերն, այլ համաշխարհի<sup>12</sup> յուսումն զայն գործեր. որ է աւրինակ ամենայն հնագանդելոց. վասն որոյ ասեր իսկ. *Արթուն կացէք, զի*<sup>13</sup> *մի՛ ի փորձութիւն*<sup>14</sup> *մտանիցէք*<sup>բ</sup>:

15 Իսկ արդ եթէ թեթեւագոյն<sup>15</sup> արուեստից՝ յակասագոյն եւ ի գիտութենէ<sup>16</sup> ազգք երկրածնացս, ո՛րչափ եւս<sup>17</sup> այնմ արուեստի ոք համարեսցի եւ անգիտանալ<sup>18</sup>՝ որ ընդ Աստուած գիտասն<sup>19</sup> կատարէ: 16 Որով երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ<sup>20</sup>, վասն որոյ<sup>21</sup> զամենակեցոյց Յոգին ի թիկունս հասանել՝ անմոռնչ հեծութեամբ բարեխաւս գիտէ:

1 *Ճա Ճք չիք* իւր

2 *c* սովորութիւն ճշմարիտ վարդապետաց

3 *Ճա* զտեառն հրամանն / *Ճք* զհրաման տեառն *փիւ*. զտերունականն

4 *bc* զմիոյ միայն

5 *Ճա Ճք չիք* զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ

ա Գործ. Ա 1

6 *Ճա Ճք չիք* Որոյ բազում *բառից մինչեւ* առաւելովք բարձրացուցանելին *խօսքը*

7 *b* աննեզնական / *c* անեզական / *e* աննիագ

8 *c* լերինն

9 *d* աշակերտս

10 *bc* ցայգոյ

11 *b* առաւելոյ / *c* առաւելոյ *փիւ*. խուզելոյ

12 *c* համայն աշխարհի

13 *bc* արթուն կացէք, յաղօթս կացէք, զի

14 *b* փորձութիւնն

բ Սարկ. ԺԴ 38

15 *eվ* ի թեթեւագոյն

16 *deվ* ի գիտութեան

17 *abdeվ չիք* եւս

18 *bc չիք* եւ (անգիտանալ) / *d* անգիտանալ

19 *bc* աստուածախօսն / *e* զխօսն

20 *b չիք* Որով երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ

21 *c* վասն որոյ / *abdeվ* որով *փիւ*. որոյ